գարձցի, և ոչ կարաց։ Այլ ազգականք նորին յայս կոյս և յայն կոյս Մուրատին աղերս յղել տային, հաւ զիւ թէ զսիրտ նորին հաշտեցուցին զի փրկեսցէ զնա. և տվեալ նմա դրամս՝ փրկեցին յայնմ պատուհասէն չնորհիւ և ողորմութեամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Շաբաթ օր (7 Ապրիլ) Աւետիք Սուրբ Աստուածածնին։ Եւ կրկին չէհր էմինին մարդ առաքեաց ի վերայ Մղտեսուն զի ի տիւանն երթիցուք. եւ ելեալ գնացաք ընդ նմա և մեք, և առաք ի վէզիրէն հրաման զի մեծ զատին տեսցէ զայդ գործդ։ Եւ գնացաք առ զատին, և նա տեսեալ զնա՝ արհամարհեաց զնա անգոսնելով եթէ Մեք զայդ ո՞չ տեսաք անցեալ աւուրքն, զի հայրդ ոչ է տալոյ քեզ ըստակ. ևս էր օրն ընդ մեզ նստեալ զատին յՍուսկիւտարոյ. ամօթ է քեզ զայդ գործել։ Զայս ասացեալ ի բաց եհան յերեսէն։ Ել և գնաց նա. և մեր իջեալ ի վար՝ պաշ[1]) նայիպէն հուճէթ առաք թէ Այս գործն տեսաւ առաջի մեր հանդերձ վկայից Տաճկաց, զոր նոքա ասէին թէ չէհր էմինին հրամայեաց և մեք առաք զդրամ ցորենոյն ի հայէս յայսմանէ։ Եւ ելեալ եկաք[2]) ի տեղիս մեր փառաւորելով զՔրիստոսի զանչափ զօրութիւն։

Այդուցս Կիրակի Բ-ի. Ծաղկազարդ Տեառն մերոյ Քրիստոսի։ Աւուրքս Ղազար վարդապետն եկ Աբևելցի։

Աւագ Եշի (12 Ապրիլ)։

Ուրբաթի օրս աւագ (13 Ապրիլ) և տօն Խաչելութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Զ-երորդ ժամն ի Ղալաթա գնացի ի Սուրբ Լուսաւորիչ և անդ արարի զժամն, և յետ ժամուն գնացի մօտ առ Վարդապետն մեր զի անդ էր, և կացեալ անդ սակաւ ինչ, և ելեալ եկի ի սահմանս իմ։

1) պաշ. 2) ելաք.